



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

## Բաղումյան Սիրանուշ

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ  
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Ա. Մովսիսյան  
Էլ. փոստ՝ [siranush.baghumyan@mail.ru](mailto:siranush.baghumyan@mail.ru)

### ՄԱՆԱ (<sup>KUR</sup>MAN(N)A) ԵՐԿՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԵՎ ՍԱՐԴՈՒՐԻ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Վանի (Բիայնիլի, Ուրարտու [9], Արարատ) թագավորությունը հզորության գագաթնակետին է հասնում Արգիշտի Ա-ի կառավարման ժամանակաշրջանում՝ Ք.ա. 786-764 թթ<sup>1</sup> [6, 10]: Իր կառավարման հենց սկզբից արքան քայլեր ձեռնարկեց թագավորության ընդարձակման ուղղությամբ: Արգիշտին մի տարվա ընթացքում արշավանքներ էր ձեռնարկեց երկրի տարբեր ուղղություններով: Նա ստեղծեց մի հզոր աշխարհակալություն, որը մեծ սպառնալիք դարձավ ժամանակի նշանակալից գերտերությունների համար:

Արգիշտի Ա-ն ընդարձակեց թագավորության սահմանները՝ հյուսիսում հասցնելով մինչև Ճորոխի ավազան, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը և Չըլդըր լճից հյուսիս ընկած շրջանները, արևմուտում և հարավ-արևմուտում՝ Եփրատի վերին և միջին հոսանքները, հարավում՝ մինչև Ասորեստան, արևելքում՝ մինչև Ուրմիա լճի հյուսիսային և արևելյան ափերը: Արքան իր կառավարման ընթացքում հաջողությամբ իրականացրեց Մանա (<sup>KUR</sup>Man(n)a) երկրի գրավումը՝ գերիշխանությունը հաստատելով Ուրմիա լճի հարավ-արևելյան շրջաններում: Նա նաև գրավեց Դիաուխի, Աբունի, Անիշթերգա, Խաթի, Տուատեխի, Ուբուրդա, Պուշթու, Խախիա, Էրիախի և այլ երկրներ: Վերջինս նվաճումները մանրամասն ներկայացրել է «Խորխոռյան տարեգրությունում»<sup>2</sup> [11, 13]:

<sup>1</sup> Մենուան ուներ երկու որդի՝ Արգիշտին և Ինուշպուան (Ունուշպուա, Սուժքա): Արգիշտին շարունակեց երկրի կառավարումը: Ինչ վերաբերվում է եղբորը՝ Ինուշպուային, մի քանի արձանագրություններ են պահպանվել վերջինիս մասին, որոնցից մեկը գտնվում է Վանի «Կուրշու-Ջամի» մզկիթում: Միգուցե ինչպես նրա հորեղբայրը՝ Սարդուրին, նա նույնպես բռնել է կրոնի ուղին և դարձել Մուսասիրի գլխավոր քուրմը:

<sup>2</sup> 1827 թվականին ֆրանսիական Ասիական ընկերության կողմից Վան գործուղվեց արևելագետ Ֆ. Է. Շուլցը, ով ընդօրինակեց մոտ 40 արձանագրություններ՝ դնելով ուրարտերենի ուսումնասիրության հիմքը: Վերջինս 1828 թվականին հայտնաբերել է «Խորխոռյան տարեգրություն»-ը, որն ուրարտական մինչ օրս հայտնի ամենամեծ արձանագրությունն է: «Խորխոռյան» ութ սյունակների արձանագրություններից առաջին յոթն են պարունակում Արգիշտի Ա-ի ձեռնարկած արշավանքների նկարագրությունները, իսկ վերջին՝ ութերորդ սյունակում գրված է արքայի անեծքը՝ ուղղված նրանց, ովքեր կփորձեն վնասել արձանագրությունը:



**Նկար 1.** «Խորխոռոյան տարեգրություն»

Կրկնելով հոր՝ Մենուայի արշավանքը, Արգիշտի Ա-ն սկզբնական շրջանում արշավանքներն ուղղում է հյուսիս՝ հաջողությամբ իրականացնելով Դիաուխի, Իգան, Տարիունի, Աբունի, Իրկուա, Էրիախի, Էրիկուանի և այլ երկրների նվաճումները [4]: Հյուսիսում հաջողությամբ իրականացնելով երկրի ընդարձակումը, Արգիշտին սկսում է թագավորությունն ընդարձակել հարավից: Արգիշտի Ա-ի հարավ կատարած արշավանքների ընթացքում նվաճված երկրներից մեծ կարևորություն ուներ Մանա երկրի նվաճումը:

«Խորխոռոյան տարեգրությունում» Մանա երկիրը հիշատակվում է մի քանի անգամ: Ակնհայտ է, որ Մանա երկիրը ժամանակ առ ժամանակ փորձել է դուրս գալ ուրարտացիներ<sup>3</sup> գերիշխանությունից այնպես, ինչպես Պուշթու, Էթիունի, Էրիախի երկրները: Սակայն ակնհայտ է նաև, որ Արգիշտին կրկին իրեն է ենթարկել տվյալ երկրները:

**Մանա (<sup>KUR</sup>Man(n)a) երկրի հիշատակությունը «Խորխոռոյան տարեգրությունում».** Արգիշտի Ա-ը, ունենալով նման ահռելի թագավորություն, չէր կարող նվաճված բոլոր երկրներում իր գերիշխանությունը միևնույն ժամանակ պահպանել, քանի որ ժամանակ առ ժամանակ, օգտվելով այն հանգամանքից, որ արքան զբաղված էր թագավորության ընդարձակմամբ, որոշ երկրներ փորձում էին վերականգնել իրենց անկախությունը: Ուստի պատահական չէ, որ «Խորխոռոյան տարեգրությունում» որոշ երկրների մի քանի անգամ են հիշատակվում: Այդպիսի երկրներից էին Մանան, Պուշթուն, Էթիունին և այլն, որոնք ցանկանում էին ազատվել ուրարտացիների

<sup>3</sup> «Ուրարտու» և «ուրարտացի» եզրույթներն աշխատանքում գործածվում են ոչ թե էթնիկական, այլ ժամանակային իմաստով:

գերիշխանությունից: Այդ իսկ պատճառով, հավանաբար, Ուրարտուի դեմ կազմակերպում էին ապստամբություններ և խռովություններ: Սակայն Արգիշտին այդ երկրներ նորից արշավանքներ էր ձեռնարկում՝ իր գերիշխանությունը վերահաստատելու նպատակով: Արգիշտին հաջողությամբ իրականացնում էր իր արշավանքները՝ մեծ ռազմագերիներով ու ավարով վերադառնալով երկիր:

Արգիշտին նվաճում է մի շարք երկրներ, որոնք այդ ժամանակաշրջանում իրենցից որոշակի ուժ էին ներկայացնում: Նվաճված երկրներից էր նաև նշանավոր Մանան: Այս երկիրը տարածվում էր Ուրմիա լճի հարավային և հարավարևելյան շրջաններում<sup>4</sup>: Երկիրը հյուսիսից սահմանակցում էր Ուրարտուին, իսկ հարավային սահմանները հասնում էր մինչև Պարշուա (Բարշուա)՝ Դիալա գետի հիմքերից ոչ հեռու [8]: Մանա երկիրն Արգիշտիի կառավարման սկզբնական շրջանում գտնվել է Ուրարտուի գերիշխանության ներքո: Այդ մասին է վկայում այն, որ միայն կառավարման ութերորդ տարում (Ք.ա. մոտ 779 թվականին) է արշավում Մանա երկիր [5]:

Մանա կատարած առաջին արշավանքի մասին Արգիշտին գրում է.

ՎHal-di-ni uš-ta-a-bi ma-a-si-ni-e <sup>GIŠ</sup>šú-ri-i-e

ka-ru-ni <sup>[KUR]</sup>ia-a-ni-ni KUR-ni-e ka-ru-ni <sup>KUR</sup>Ma-na-ni <sup>KUR</sup>Bu-uš-tú-ni

te-qu-a-li [<sup>m</sup>]Ar-giš-ti-ka-a-i

*«Խալդին արշավեց, սեփական զենքին (?) ենթարկեց Իյանե երկիրը, ենթարկեց Մանա (երկիրը), Պուշթու (երկիրը), զգեպնեց նրանց Արգիշտիի առջև»* [5, 9]: Վերոնշյալ արձանագրությունից ակնհայտ երևում է, որ Ք.ա. մոտ 779 թվականին Արգիշտին հաջողությամբ իրականացնում է Մանա երկրի գրավումը:

Հաջորդ տարի՝ Ք.ա. մոտ 778 թվականին, Արգիշտին նորից արշավանք է կատարում հարավ, որի ընթացքում էլ հիշատակում է Մանա երկիրը:

ՎHal-di-ni uš-ta-bi

ma-si-ni-e <sup>[GIŠ]</sup>šú-ri-i-e

ka-ru-ni <sup>[KUR]</sup>Ma-na-ni

<sup>KUR</sup>e-ba-a-[ni]-i-e

ka-ru-ni [<sup>KUR</sup>Ir-k]i-ú-ni-ni

te-e-qu-ú-a-li

<sup>m</sup>Ar-gi-iš-ti-ka-i

*«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, ենթարկեց Իրքիունի (երկիրը), զգեպնեց նրանց Արգիշտիի առջև»* [5, 9]:

ՎHal-di-i-ni-ni al-su-i-ši-ni uš-ta-di

<sup>KUR</sup>Ma-na-i-di ha-iú-bi <sup>KUR</sup>Ir-ki-ú-ni-ni

ku-tè-a-di pa-ri <sup>KUR</sup>Aš-šur-ni-ni <sup>KUR</sup>al-ga-ni

Շարունակելով տեքստը՝ Արգիշտին գրում է. «...Խալդյան մեծությամբ

<sup>4</sup> Մանա թագավորությունն ասորեստանյան աղբյուրներում նաև հանդիպում է Մանեցիների երկիր անվամբ, իսկ Աստվածաշնչի հրեական բնագրում՝ Միննի: Այն, հավանաբար, կազմավորվել է Ք.ա. մոտ 9-րդ դարի վերջին:

արշավեցի Մանա (երկրի) վրա, գրավեցի Իրքիունե (երկիրը), կտրում էի մինչև Ասորեստանյան հարթավայրը: . . . » [5, 9]: Վերոնշյալ տեքստից ակնհայտ է, որ հերթական անգամ արշավանքը հաջողությամբ է պսակվել:

Ք.ա. մոտ 777 թվականին Արգիշտին արշավում է Մանա և Պուշթու երկրներ և հաջողությամբ վերահաստատում իր գերիշխանությունը:

<sup>d</sup>Hal-di-ni uš-ta-bi ma-si-ni-e <sup>GIŠ</sup>šú-ri-e  
ka-ru-ú-ni <sup>KUR</sup>Ma-na-a-ni <sup>KUR</sup>e-ba-ni-i-e  
ka-ru-ú-ni <sup>KUR</sup>Bu-uš-tú-ni te-qu-ú-a-li  
<sup>m</sup>Ar-gi-iš-ti-i-ka-i <sup>m</sup>Me-nu-a-hi-ni-i-e

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, ենթարկեց Պուշթու (երկիրը), զգեպնեց նրանց Արգիշտիի առջև Մինուայրդու» [5, 9]:

Արձանագրության մեկ այլ հատվածում Արգիշտին նշում է, որ Մանան փորձել է վերականգնել անկախությունը և նույնիսկ նվաճումներ կատարել: Մանան գրավում է Սիրա քաղաքը և փորձում է դուրս գալ Ուրարտուի գերիշխանությունից: Սակայն Արգիշտին իր զորքով շարժվում է Մանա, գրավում Սիրա քաղաքը և վերապաշարում երկիրը՝ հաջողությամբ գրավելով այն:

<sup>d</sup>Hal-di-ni uš-ta-bi ma-[si-ni-e <sup>GIŠ</sup>šú]-ri-e  
[ka-r]u-ni <sup>KUR</sup>Ma-na-a-ni [<sup>LÚ</sup>hu-ra]-di-i-e  
[te-qu]-ni [<sup>m</sup>Ar-giš-ti-ka-i [<sup>m</sup>Me]-nu-a-hi-ni-e  
[<sup>d</sup>Hal]-di-i-ni-ni al-su-i-ši-i-ni  
[<sup>m</sup>Ar-giš]-ti-še <sup>m</sup>Me-nu-ú-a-hi-ni-še a-li-e  
[i-e-še?] <sup>m</sup>Ar-giš-te-e-hi-ni-li ši-du-bi  
[<sup>D</sup>m]u-na-ni PA <sup>m</sup>A-za-i-ni-e <sup>KUR</sup>ni-e a-gu-bi  
[.....] tar-ma-na-li(?) [<sup>UJRU</sup>?Si-ra-a-ni ha-i-la-a-ni  
...[<sup>m</sup>A]r-giš-ti-še a-li-e še-ip(?)-tú si-na-[...]-a(?)  
[<sup>LÚ</sup>]A.SI<sup>MES</sup>-ši-e <sup>LÚ</sup>ú-e-li šú-si-ni-e [.....]  
<sup>UJRU</sup>Si-ra-ni qa-ab-qa-ru-u-bi nu-na-bi <sup>KUR</sup>Ma-na-[a]-ni

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա (երկրի) զորքը, զգեպնեց Արգիշտիի առջև Մինուայրդու: Խալդյան մեծությամբ Արգիշտի Մինուայրդին ասում է. - Երբ Արգիշտիսինիլի (քաղաքը) կառուցեցի (և) գեպից (մի) ջրանցք Ազայան երկրին անցկացրի, լսեցի, (որ) Մանա (երկիրը) Սիրա (քաղաքը) գրավել է: . . . Արգիշտին ասում է. - (...) զորքի մեջ՝ գնդի առջև, արշավեցի (և) Սիրա (քաղաքը) վերապաշարեցի Մանա (երկրի)» [5, 9]: Վերոնշյալ արշավանքն Արգիշտի Ա-ը կատարել է Ք.ա. մոտ 776 թվականին:

Ք.ա. մոտ 775 թվականին Արգիշտին շարունակում է երկրի ընդարձակումը:

<sup>d</sup>Hal-di-ni uš-ta-bi ma-si-ni-e <sup>GIŠ</sup>šú-ri-i-e  
ka-ru-ni <sup>KUR</sup>U-a-ra-a-ši-ni-e-i hu-[bi]  
pa-ri <sup>ŠAD</sup>Gur-qu-ú-e ka-ru-ni <sup>KUR</sup>Ma-na-a-ni  
<sup>LÚ</sup>A.SI<sup>MES</sup>-i-e te-qu-a-li <sup>m</sup>Ar-giš-ti-ka-i ... <sup>LÚ</sup>A.SI<sup>MES</sup> ú-e-li-du-bi



uš-ta-di <sup>KUR</sup>Ma-na-i-di KUR-ni a-tú-bi URU<sup>MEŠ</sup> GIBÍL-bi  
ku-tè-a-di pa-ri <sup>URU</sup>Ú-i-hi-ka-a <sup>KUR</sup>Bu-uš-tú-e

*«Խալդին արշավեց, սեփական զենքին (?) ենթարկեց Տուարածյան դաշտը մինչև Քարքու (լեռը), ենթարկեց Մանա (երկրի) զորքը, զգեպնեց նրանց Արգիշտիի առջև:*

*...Չորք գնդեցի, արշավեցի Մանա (երկրի) վրա: Երկիրը կերա (յուրացրի), քաղաքները այրեցի: Կտրում էի մինչև Վիխիքա (քաղաքը) Պուշթու (երկրի)» [5, 9]:*

Մանա կատարած վերջին (հավանաբար խոսքը վերաբերում է Ք.ա. մոտ 774 թվականին) արշավանքի վերաբերյալ Արգիշտին գրում է.

<sup>m</sup>Ar-gi-iš-ti-še <sup>m</sup>Me-n[u]-a-hi-ni-e-še a-li-[e]  
uš-ta-di <sup>KUR</sup>Ma-na-i-d[i] KUR-ni a-tú-bi URU<sup>MEŠ</sup> GIBÍL-[bi]  
<sup>URU</sup>Ši-me-ri-ha-di-ri-ni URU LUGÁL-nu-si a-gu-nu-ni [ma-nu]  
gu-nu-šá-a ha-ú-bi `a-še <sup>SAL</sup>lu-tú iš-ti-ni-ni pa-[ru-bi]

*«...Արշավեցի Մանա (երկրի) վրա, երկիրը կերա (յուրացրի), քաղաքները այրեցի: Շիմերեխադերե քաղաքն արքայական, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի: Մարդ, կին այնտեղից քշեցի»<sup>5</sup> [5, 9]:*

Հաջորդ տարիների ընթացքում Արգիշտի Ա-ի կառավարման վերաբերյալ տեղեկությունները խիստ սակավաթիվ են. գրեթե բացակայում են: «Խորխոռյան տարեգրությունում» յոթերորդ սյունակը գրեթե ամբողջությամբ ջնջված է: Այդ է պատճառը, որ Արգիշտիի կառավարման վերջին շրջանի վերաբերյալ տեղեկությունները չափազանց քիչ են:

Այնուամենայնիվ, Արգիշտի Ա-ի կառավարման վերջին շրջանում ևս Մանա երկիրը շարունակել է մնալ Վանի թագավորության գերիշխանության ներքո: Ասվածի վառ ապացույց է այն, որ, երբ Արգիշտի Ա-ից հետո իշխանությունն անցավ Սարգուրի Բ-ին, նա իր կառավարման սկզբնական շրջանում արշավանք կատարեց ոչ թե հարավ-արևելք, այլ հյուսիս: Ակնհայտ է, որ Սարգուրի Բ-ի կառավարման սկզբնական շրջանում հարավում կամ հարավ-արևելքում իրավիճակը կայուն է եղել, ինչը չենք կարող ասել հյուսիսային շրջանների վերաբերյալ:

Որպեսզի կարողանանք հասկանալ, թե ինչ կարգավիճակում է եղել Մանա երկիրն Արգիշտի Ա-ի կառավարման վերջին շրջանում, պետք է ուշադրություն դարձնենք Սարգուր Բ-ի գահակալման սկզբնական շրջանում կատարած արշավանքների ուղղություններին: Սա մեզ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպիսին են եղել թագավորության սահմաններն Արգիշտի Ա-ի կառավարման վերջին շրջանում, որը և փոխանցվում է որդուն՝ Սարգուրի Բ-ին:

<sup>5</sup> Շիմերեխադերե քաղաքը, հավանաբար, այս ժամանակաշրջանում եղել է երկրի կենտրոնը:



Նկար 2. Վանի թագավորության քարտեզը

**Անդրադարձ Սարդուրի Բ-ի տարեգրությանը.** Նախքան Սարդուրի Բ-ի տարեգրությանն անցնելը, պետք է անդրադառնանք արքայի թողած մեկ այլ արձանագրության, ըստ որի՝

ᵀHal-di-ni uš-ta-bi ma-si-ni šu-ri-e

ka-ru-ni ᵀAr-qu-qi-ni KUR-ni-e

ᵀdSar-du-ri-še a-li uš-ta-di

ha-ú-bi ᵀAr-qu-qi-ni KUR-ni-e

ku-tu-bi pa-ri <sup>KUR</sup>Ur-tè-hi KUR-ni

ᵀHal-di-ni-ni al-su-i-ši-ni

ᵀdSar-du-ri-ni ᵀAr-giš-ti-hi

LUGÁL DAN.NU LUGÁL GAL-ni LUGÁL KUR.KUR LUGÁL LUGÁL <sup>MEŠ</sup>

a-lu-si <sup>URU</sup>Tu-uš-pa-a-e URU

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Արկուկի (ցեղի) երկիրը: Սարդուրին ասում է. - Արշավեցի, գրավեցի Արկուկի (ցեղի) երկիրը, կտրեցի մինչև Ուրտեխի (երկիրը)» [4]: Հաջորդում է արքայական տիտղոսաշարը<sup>6</sup> [5, 9]: Վերոնշյալ արձանագրության մեջ հիշատակվող Ուրտեխի երկիրը համապատասխանում է Մեծ

<sup>6</sup> Արձանագրությունը փորագրված է մեծ քարի վրա, Սևանա լճի հարավային ափի մոտակայքում: Համաձայն այս արձանագրության՝ Սարդուրի Բ-ը նվաճել էր Սևանա լճի ավազանի երկրները և հասել է մինչև Արցախի սահմանները:

Հայքի Արցախ նահանգին (Գ. Ա. Ղափանցյանի կարծիքով), որը փաստում է այն, որ Արցախը դեռևս Վանի թագավորության ժամանակաշրջանում գտնվել է Հայաստանի կազմում<sup>7</sup> [1, 7]: Այն գտնվում էր երկրի հյուսիս-արևելքում: Արքան նախ արշավում է այս ուղղությամբ, ապա գրում՝

<sup>d</sup>Hal-di-ni uš-ta-bi ma-si-i-ni-e <sup>GIŠ</sup>šú-ri-e ka-ru-ni <sup>KUR</sup>Ma-na-ni  
KUR-ni-e te-qu-ni <sup>md</sup>Sar-du-ri-ka-i <sup>m</sup>Ar-giš-ti-hi-ni-e <sup>d</sup>Hal-di ku-ru-ni  
<sup>d</sup>Hal-di-ni-ni <sup>GIŠ</sup>šú-ri-ii ku-ru-ni uš-ta-bi <sup>md</sup>Sar-du-ri-i-ni  
<sup>m</sup>Ar-giš-ti-hi <sup>md</sup>[Sa]r-du-ri-[š]e a-li-e uš-ta-a-di <sup>KUR</sup>Ba-bi-lu-ni-e  
<sup>KUR</sup>e-ba-ni-gi-di ha-[ú-bi] <sup>KUR</sup>Ba-bi-lu-ú <sup>KUR</sup>e-ba-a-ni ku-tè-a-di pa-ri  
<sup>KUR</sup>Ba-ru-a-ta-i-ni-a

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, զգեպնեց Սարդուրի Արգիշտորդու առջև: Խալդին (իմ) զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է): Արշավեց Սարդուրի Արգիշտորդին: Սարդուրին ասում է. - Արշավեցի Բաբիլու(նի) երկրի վրա: Գրավեցի Բաբիլու(նի) երկիրը: Կտրում էի մինչև Բարուաթա (երկիրը)»<sup>8</sup> [3, 5, 9]: Վերոնշյալ տեքստում Սարդուրի Բ-ը հիշատակում է Մանա երկիրը, այնուհետև արշավում է Բաբիլու(նի) երկիր, գրավում, ապա նշում է, որ երկրի սահմանը հասցնում է մինչև Բարուաթա (երկիրը): Որպեսզի հասկանանք՝ արդյոք արքան ուներ Մանա երկիրը գրավելու խնդիր, պետք է ուշադրություն դարձնենք արշավանքների ուղղություններին:

Սարդուրի Բ-ը, ինչպես ասվեց, նախ արշավել է հյուսիս՝ Արկուկի (ցեղի) երկիր, և հասել է մինչև Ուրտեխի (երկիրը): Այնուհետև շարժվում է Մանա երկիրը, և համաձայն տեքստի՝ «ենթարկում» այն:

Սեպագիր արձանագրությունները խիստ կաղապարված են, ուստի, հարց է առաջանում՝ արդյոք Սարդուրի Բ-ը «ենթարկել» է Մանա երկիրը, թե ուղղակի անցել է այդ երկրի տարածքով: Քանի որ ակնհայտ է, որ արքայի ուշադրության կենտրոնում է հայտնվել ոչ թե Մանա երկիրը, այլ Բաբիլու(նի) երկիրը (Բաբելոն քաղաքի երկիրը): Սարդուրին հյուսիսում Արկուկի երկիրը գրավելուց հետո իր առջև խնդիր էր դրել շարժվել հարավ և ընդարձակել հարավային սահմանները: Քանի որ Մանա երկիրը գտնվում էր Վանի թագավորության իշխանության ներքո, արքան ոչ թե «ենթարկել»

<sup>7</sup> Արցախը Մեծ Հայքի տասներորդ նահանգն էր: Ուներ 12 գավառ՝ Մյուս Հաբանդ, Վայկունիք, Բերձոր (Բերդաձոր), Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պաձկանք, Սիսական-ի-Կոտակ, Քուստ-ի-Փառնես, Կողթ: Արցախը տարածվում էր Սյունիքից արևելք՝ Կուր և Արաքս գետերի միջև: Պատմագիտական որոշ վկայությունների համաձայն՝ Արցախ նահանգն ընդգրկում էր նաև Սևանա լճի հյուսիսարևելյան շրջանում գտնվող տարածքը (մինչև Աղստև գետը): Արցախի մասին առաջին վաղագույն հիշատակությունները վերաբերում են Ք.ա. 8-րդ դարին: Այս տեղեկությունները փաստում են, որ Սարդուրի Բ-ի կառավարման ժամանակաշրջանում Արցախը եղել է Վանի թագավորության կազմում: Վանի կամ Արարատյան թագավորության սեպագիր արձանագրություններում Արցախ նահանգը հիշատակվում է Ուրդեխինի կամ Ուրդեխե ձևերով:

<sup>8</sup> Իգոր Դյակոնովի կարծիքով՝ ուրարտական տեքստերում հիշատակված Նամրի երկիրը հանդես է գալիս իբրև «Բաբելոնիա» (<sup>URU</sup>Babilu(ni) <sup>KUR</sup>ebani): Մեր կարծիքով՝ Դյակոնովը գուցե բացառել է, որ ուրարտական զորքը խորացել է դեպի հարավ, ուստի դա է վերոնշյալ կարծիքի առաջացման խնդիրը:

է այդ երկիրը, այլ «անցել» է երկրի տարածքով՝ Բաբիլու(նի) երկիրը նվաճելու համար: Այնուհետև արքան նշում է, որ սահմանները հասցրել է մինչև Բարուաթա երկիրը (այն գտնվում էր Ուրմիա լճից հարավ, հավանաբար, Մանայի հարևանությամբ):

**Այստեղ հարց է առաջանում, թե ինչո՞ւ արքան հարավ շարժվեց Մանա երկրի տարածքով, այլ ոչ թե մեկ այլ երկրի:** Այս հարցին պատասխանելու համար պետք է անդրադառնանք Մանա երկրի ընդհանուր բնութագրին:

**Մանա (<sup>KUR</sup>Man(n)a) երկրի ընդհանուր բնութագիրը.** Մանա երկիրը տարածվում էր Ուրմիա լճի հարավային և հարավարևելյան տարածքներում: Այն ժամանակի քաղաքական հզորագույն միավորներից է եղել: Դեռևս Ք.ա. մոտ 820-ական թվականներին այս երկիրը հավակնում էր «Նաիրյան երկրների» կամ «մերձուրմյան Նաիրիի» միավորման գործընթացում ունենալ այնպիսի դերակատարում, ինչպիսին ուներ Ուրարտուն [2]: Այնուհետև Մանա երկիրը գրավում է Ներքին Ջամուան՝ զբաղեցնելով Ուրմիա լճի ոչ միայն հարավային և հարավարևելյան, այլև հարավարևմտյան հատվածը [2], ինչը, անշուշտ, մեծ ձեռքբերում էր:

Հետագայում Մանա երկիրը մերձուրմյան տարածքներում դիրքերը զիջում է քաղաքական մեկ այլ ուժի<sup>9</sup> [2]: Սակայն, արդեն Մենուայի միանձնյա կառավարման ժամանակաշրջանում Մանա երկիրը սկսում է հզորանալ, ինչը պայմանավորված էր Ասորեստանի նկատելի թուլացմամբ և ուրարտացիների՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսում ձեռք բերած հաջողություններով: Հետագայում ուրարտացիները ձգտում էին ընդարձակվել հարավում՝ Ուրմիա լճի ավազանում հիմնելով ռազմական կենտրոններ: Այս արշավանքը թույլ կտար ուրարտացիներին իրենց ազդեցությունը հաստատել Ջագրոսի առևտրական ուղիների վրա: Նման պայմաններում Մանայի հետ բախումն անխուսափելի էր դառնում:

Այնհայտ է, որ դեռևս Մենուայի կառավարման վերջին շրջանից Մանան հայտնվում է ուրարտացիների գերիշխանության ներքո: Իսկ արդեն Արգիշտի Ա-ի կառավարման ժամանակաշրջանում ուրարտացիներին հաջողվում է իրենց գերիշխանությունը հաստատել Մանա երկրում և մի շարք հաղթական մարտեր մղել վերջինիս դեմ:

Չպետք է բացառենք այն հանգամանքը, որ անգամ գտնվելով Վանի թագավորության գերիշխանության ներքո, երկիրը շարունակում էր պահպանել իր հզորությունը: Ուստի պատահական չէ, որ Վանի թագավորության հզոր արքաներից Արգիշտի Ա-ը մի քանի արշավանքներ է ձեռնարկում Մանա երկիր՝ գերիշխանությունը կրկին վերահաստատելու համար (մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր Ա, Երևան, 2007, էջ 161-72): Սա թույլ է տալիս խոսել Մանա երկրի ռազմական կայուն ուժի մասին:

<sup>9</sup> Ք.ա. մոտ 820-ական թվականներին մերձուրմյան տարածաշրջանում հիշատակվում է քաղաքական մեկ այլ ուժ: Մանայի փոխարեն տարածաշրջանում հանդես է գալիս Շարժինայի՝ Մեկտիարայի որդու իշխանությունը, որը Իշպուփնի արքայի դաշնակիցն էր:

Նման պայմաններում պատահական չէ այն, որ Սարգուրի Բ-ը Բաբիլու(նի) երկիր արշավեց Մանա երկրի տարածքով: Դրդապատճառները մի քանիսն էին՝

- գտնվում էր Ուրարտուի գերիշխանության ներքո,
- ուրարտական ռազմական հենակետերի առկայություն,
- հարուստ ավար:

Այս երեք կետերը խիստ կարևոր գործոն էին համարվում հետագա արշավանքը դեպի Բաբիլու(նի) շարունակելու համար: Քանի որ Սարգուրին արշավել էր հյուսիս՝ Արկունի երկրի դեմ, և անհրաժեշտ էր մի տեղ, որտեղ զորքը կկարողանար վերապատրաստվել հաջորդ արշավանքին, ընտրվեց Մանա երկիրը: Այն գտնվում էր ուրարտացիների գերիշխանության ներքո, այնտեղ զորքը կկարողանար վերականգնել իր ուժերը՝ շարժվելով Բաբիլու(նի) երկիր:

Ամփոփելով հարկ է նշել, որ Սարգուրի Բ-ի թողած սեպագիր արձանագրության համաձայն՝ Մանա երկիրը դեռևս Արգիշտի Ա-ի կառավարման վերջին շրջանում գտնվել է Վանի թագավորության կազմում: Երկիրը Արգիշտի Ա-ի ստեղծած հզոր աշխարհակալության մաս է կազմել, և մինչև Արգիշտիի որդու՝ Սարգուրի Բ-ի կառավարման սկզբնական ժամանակաշրջանում շարունակել է մնալ Վանի թագավորության կազմում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Աղաբաբյան Ս. Ա., Ղարիբյան Ա. Ա.**, Արցախ (Արցախը վաղնջական ժամանակներից մինչև 1917 թվականը. Հայացք անցյալին), Երևան, 2014, էջ 6-8:
- [2] **Գրեկյան Ե.**, Ուրարտու և Մանա (Մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատման խնդրի շուրջ), Արևելք, Հին և Միջին դարեր, Երևան, 2001, էջ 6-7:
- [3] **Գրեկյան Ե.**, Արգիշտի I արքայի գահակալության տարիների վերաթվագրության հարցի շուրջ. Պատմա-բանասիրական հանդես, № 3, Երևան, 2016, էջ 3:
- [4] **Կարազեոզեան Յ.**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հատոր Ա, գիրք Ա, Երևան, 1998, էջ 184:
- [5] **Հարությունյան Ն. Վ.**, Ուրարտու պետության կազմավորումը, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հատոր Ա, Երևան, 1971, էջ 304:
- [6] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր Ա, Երևան, 2007, էջ 165-74:
- [7] **Ղափանցյան Գ.**, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 156:
- [8] **Մկրտչյան Շ.**, Արցախ, Երևան, 1991, էջ 7-9:
- [9] **Арутюнян Н. В.**, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 135.
- [10] **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, сс. 169-232.
- [11] **Redgate A. E.**, The Peoples of Europe. The Armenians, Oxford, 2000, p. 30.

[12] **Zimansky P.**, Ecology and Empire: The Structure of the Urartian State. Studies in Ancient Oriental Civilization, no. 41, Chicago, 1985, p. 9.

[13] **Salvini M.**, Corpus dei testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi, Roma, 2008, A 8-3, pp. 332-45.

Բաղումյան Սիրանուշ

**ՄԱՆԱ (<sup>KUR</sup>MAN(N)A) ԵՐԿՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ԳԱՀԱԿԱԼՄԱՆ  
ՎԵՐՋԻՆ ԵՎ ՍԱՐԴՈՒՐԻ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

**Բանալի բառեր՝** Վանի թագավորություն, Արգիշտի I, Մանա երկիր, Սարդուրի II, ռազմական արշավանք, Բաբիլու(նի) երկիր, նվաճել, Ուրմիա լիճ, Ասորեստան:

Մանա երկիրն Արգիշտի Ա-ի կառավարման վերջին շրջանում շարունակել է մնալ Վանի թագավորության գերիշխանության ներքո: Ուշադրություն դարձնելով Արգիշտի Ա-ի որդու՝ Սարդուրի Բ-ի կառավարման սկզբում կատարած արշավանքների ուղղություններին, հասկանում ենք, թե ինչ կարգավիճակում է եղել Մանա երկիրն Արգիշտի Ա-ի կառավարման վերջին շրջանում: Սարդուրին Բ-ը նախ արշավել է հյուսիս՝ Արկուկի երկիրը՝ հասելով մինչև Ուրտեխի (երկիրը), ապա շարժվել է հարավ՝ Մանայի տարածքով անցնելով Բաբիլու(նի): Արքան նպատակ ուներ գրավելու Բաբիլու(նի) երկիրը: Իսկ Մանա երկրի տարածքով անցնելը պայմանավորված էր վերջինիս հարմար դիրքով, հարուստ ավարով, ուրարտական ռազմական հենակետերի առկայությամբ, ինչը թույլ կտար վերականգնել ուժերը և արշավել Բաբիլու(նի):

Багумян Сирануш

**СТАТУС СТРАНЫ МАНА (<sup>KUR</sup>MAN(N)A) В КОНЦЕ ПРАВЛЕНИЯ АРГИШТИ I И  
НАЧАЛА ПРАВЛЕНИЯ САРДУРИ II**

**Ключевые слова:** Ванское царство, Аргишти I, страна Мана, Сардури II, военный поход, страна Вавилон, завоевать, озеро Урмия, Ассирия.

Земля Мана продолжала находиться под властью Ванской царстве до конца правления Аргишти I. Обращая внимание на направление вторжений в самом начале правления сына Аргишти I - Сардури II, мы можем сделать выводы о статусе страны Мана в последний период правления Аргишти I. Сардури II сначала двинулся на север к стране Аркуки, достиг Уртехи (страна), затем двинулся на юг и пересек страну Мана, двигаясь до Бабилу(ни). Царь намеревался завоевать страну Бабилу(ни). И проход через страну Мана был обусловлен ее удобной позицией, богатой добычей, наличием урартских военных баз, которые позволили бы войскам восстановить свои силы и совершить набег на Бабилу(ни).

**MANNEA (<sup>KUR</sup>MAN(N)A) COUNTRY'S STATUS AT LAST OF ARGISHT I'S INCLUSION  
AND SARDUR II'S INCLUSION INITIATIVE**

**Key words:** Kingdom of Van, Argishti I, Mannea land, Sarduri II, military invasion, Babylon country, conquest, Lake Urmia, Assyria.

During the last period of Argishti I's reign, Mannea country remained under the rule of the Van kingdom. Paying attention to the direction of the invasions at the beginning of the reign of the son of Argishti I - Sarduri II, we can draw conclusions about the status of the Mannea land during the last period of Argishti I's reign. Sarduri II first moved north to the land of Arkuki, reached Urtechi (land), then moved south and crossed the Mannea area moving towards Babylon. The king intended to conquer the land of Babylon. Passing through the land of Mannea was conditioned by its convenient position, rich loot, and presence of Urartian military bases, which would allow the troops to recover and then raid on Babylon.